

Հայաստանի Հանրապետության

օրենքը

Ընդունված է 2008թվականի օգոստոսի 21-ին

972 Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի /այսուհետ՝ Օրենսգիրք/ 158-րդ հոդվածում՝

1) 12-րդ մասը «առանց պայմանագրի կնքման» բառերից հետո լրացնել «կամ օրենքով սահմանված պարտադիր պահանջների խախտումներով կնքված պայմանագրով» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 26-րդ և 27-րդ մասերով.

«Առևտրի իրականացման վայրի լիցենզավորված կազմակերպչի կողմից լիցենզավորող մարմնին օրենքով սահմանված ժամկետներում հաշվետվություն չներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:

«Առևտրի իրականացման վայրի լիցենզավորված կազմակերպչի կողմից լիցենզավորող մարմնին ներկայացված հաշվետվություններում սխալ տեղեկություններ ներառելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ՝ յուրաքանչյուր վաճառողին վերաբերող սխալ տեղեկության համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

Հոդված 2 Օրենսգրքի 244.7-րդ հոդվածում «158 հոդվածի երկրորդ, երրորդ, և քսանմեկերորդ մասերով» բառերը փոխարինել «158 հոդվածի երկրորդ, երրորդ, և քսանմեկերորդ, քսաներեքերորդ և քսանչորսերորդ մասերով» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ

Ս. Սարգսյան

2008թ սեպտեմբերի 12 Երևան

ՀՕ -142-Ն